

վերջին ամիսն իր մահը տեսաւ, այլ ուրիշ վրայ
ինկեր էր, և ոչ զք կ'երկարէր որ օր մը չէ օր
մը պիտի ամբաստնար յիշխանութիւն և թերևս
'ի բարձրագոյն իշխանութիւն:

Իրիւսած մը Հասաւ վրան իր լիուլի բախտա-
ւորութեան մէջ: Այն Հրացանի Հարուածն որ
գնա խոցեց, մինչդեռ ինքն կը շնամար իր մէկ
սիրուհւոյն ձեռքէն զէնքը քարել, զինքը չէր
սպաննեար, եթէ վէրքն չի հանդիպեր յայլոց արև
տակ վիրաւորեալ մարմնոյ մը: Չքաւորեալ երի-
տասարդութենէ մ'ետքը, երազանա ճոխա-
թիւնքն, զոր բազումք իրեն երեսը կը զարնէին,
զինքն յօժարեցուցին այն վայելից՝ զոր փռան-
կական մայրութեան կը յառլէ գրամոյն և համ-
բաւոյ: Արբնայ բաւիլ որ ինքն զոհ եղաւ զեղ-
խութեան և հաճոյից, ինչպէս որ մը խօսից ու-
րիչ իշխան մը, Միրապոյ:

Իր մահն քաղաքագիտական դէպք մը համա-
րուեցաւ, աւելի ժխտողական մտք քան թէ
մարդկան, որովհետև մարդ բոլոր իր շարք չէր
ցուցած, և ոչ զք կրնայ գուչակել հետևութիւն
քը՝ որ օր մը չէ օր մը յառաջ պիտի բերէր իր
իշխանութեան վերագործումը: Գաղղիական
հասարակապետութիւնն իրաւունք ունի անոր
մահը արտասուելու. այնպէս աղքատ է հեղի-
նակաւոր քաղաքագիտական մարդիկներէ, որ
այս՝ իրեն համար ծանր կորուստ է: Հիմարտ
է թէ Կամպեղոզա իրեն իշխանութենէն շատ
բան կորսնցուցեր էր այն « ընկերական նոր խա-
ւերուն » վրայ, զոր ինքն կոչեր էր ընտիր ասա-
ցուածով և յորոյ փայտիայեցաւ առաջին ժամա-
նակներն: Բայց ուրիչ կողմանէ ինքն զանոնք
կը ճանչնար, այ՛ վերջին խաւերը. և շատ ամիս
չեն անցած, որ սուրազեցի ռամսկարայոց ժո-
ղովք մը մէջ. « Իս գիտացից գալ գտանել ըզ-
ձեզ յորջո ձեր »: Երայր այնզ կուսակցութեանց
կուսակազէզ այնքոն, Հասարակապետութիւնն
դժնդակ կուրներ պիտի ունենայ. և աշա իր
մեծ ըմբիշներէն մէկն յանկարծ կը պակսի: ...
Ուրիչ կողմանէ սասյգ է՝ որ արտաքին քաղա-

քաղաքագիտական մէջ Կամպեղոզայի անունն ի-
բրև պատերազմի փող մը կը հնչէր: Արդէն իր
կարծ պտոտնակալութեան մէջ ինքն յանդուգն
երևցեր էր. այլ այս յանդգնութիւնս, որ իրեն
անկման պատճառներէն մէկն եղաւ՝ յետագայ
պատահարք բաւական իրաւացի յայտնուեցաւ,
վրան զի ինքն կուզէր տանել զԱնդապա ընդ
Գաղղիոյ Այգիպոսս, արևաւանք զոր ապա Ան-
զդիս միայն կատարեց, և 'ի վրաս Գողղիոյ:

Այլ ամեն բանէն վեր Կամպեղոզա հոմա-
րեալ և աշարկու էր իբրև պապոյ « վրիժ ու »
(revanche) մտքոյ: Եւ կը լրտեսէր զվայրկեա-
նը, յորում կրնար խոյանալ ընդդէմ՝ Վերման-
նիոյ: Գերմանական թերթք չեն երևցունէր ոչ
հանրորոյց ցատումը և ոչ արմատականաց լըր-
բութիւնը. կը յարգեն զմարդը. բայց կը թուի
թէ թեթևութիւն մը կը զգան, վրան զի խիզախ
թշնամի մը անշետ եղաւ: Եւսև Ասկարանն
Բարիզու յուսելմամբ մ'ողջունեց Կամպեղոզայի
մահը, իբրև խաղաղութեան մեծագոյն երազ
խաւորութիւն մը: Բայց սակայն այն օրն՝ յո-
րում Գերմանիա ըլլայ տկար կամ կղղիացեալ
կամ այլ թշնամիք վրան յարձկած ըլլան, դը-
ժուարին պիտի չըլլայ գանձ 'ի Գողղիոյ ու-
րիչ Կամպեղոզաներ գրգռելու զայնարհը վրի-
ժու գաղափարին. որոնք թերևս պակսին ներ-
քին թշնամեաց դէմ կուսելու համար, ռամկա-
վարութեան որ կը խուժէ, ընդդիմագործու-
թեան որ մտիկ կ'ընէ: Խոտայցիք թերևս աւելի
անկողնասուրճն են գտատելու զմարդը, Ան-
զիտցիներէն դեռ աւելի՛ որ բանագործութեանց
և կրից վրայ կը ժիծ աղին, յորոց իրենք ազատ
են կամ կը կարծեն ըլլալ: Կամպեղոզա՛ խա-
լիոյ բարեկամ չէր, կամ շատ ցուրտ. կը փութ
չէր իր վրայ սէր ցուցնելէն, իրեն ծագմամբ
խաղաղի ըլլալուն համար, զոր շատ անգամ
երեսը կը զարնէին: Բայց թերևս այս ծագման
համար կերպով մ' իտալիա կը սիրեր զինքը, որ
յայտնուեցաւ այս աւուրց յիշատակութեանց
մէջ:

Կ Ի Ի Ս Ս Ս . Վ Տ Ո Ւ Է

Մինչդեռ 'ի Հոռով հանդիսի կը բացուէր
գեղարուեստից հանրագոյնի մրցանք մը, Գաղ-
ղիա կը կորսնցընէր զԻրաւասով Տոսէ, իր ամե-
նէն իսկատիպ և ամենէն ժողովրդական ա-
րուեստագէտներէն մէկը:

Ծնեալ 'ի Միրապոլեի 'ի 1832ի, Հազիւ 81
տարուան կար. այլ կարճ կեանքն իրեն բաւա-
կան եղաւ ծրագրիչ, նկարիչ, արձանագործ,
փորագրող ըլլալու, պատկերագրագէտ զԱն-

տուատային Տիպարանն Տանդէի և զԻրուստ
Դրախտին Միլտոնի, զհոգեւունչն Ալպա Դա-
դոպիանի և զանհամետ Վիկու (Coates) Լա-
ֆունգենի, զերևակապական Տոսէ-Վիկու Գլ, Բոլան,
դէսի և զքաղցր բանաստեղծութիւնս Կենրու-
նի, զԱտուաւածալանն Գիլիս և զբանդակիրիւլա-
կան (պորտաբոյծ) քործս Ռոսպլէի, զՄարդա-
շարժ Վիկու (Coates drolatiques) Պալպոպի և
զՕրլանտոս մոյգիկն Արիտոլոյի, այսպէս մա-

տիրով Թարգմանելով ամենայն տեսակ մատե-
նագրութեան զարնտիր գործեր, մարդկային
հմանարդ գանազանագոյն արտադրութիւններ :
Յիսուս և մի անք կենաց իրեն բաւական եղան
այնչափ գործելու՝ որչափ որ բաւական կրնային
ըլլալ ոչ մէկու մը միայն Համբաւայն՝ այլ հինգ
կամ վեց արուեստագիտաց :

Ի 1848ին, վերստանամտայ, արդէն Կիւս-
տովանուանի էրիր Հիւրակիսիայիստորքեսուրք
(Travaux d' Hercule), կարգ մը ծաղարանկա-
րուց հրատարակելոց յոսոցիտն վասն ծիծաղելոց
(Journal pour rire) Ֆիլիբրոնի : Եւ այն ժամա-
նակէն ետքը ծրագիրք կը հեղհեղէին, և թէ կա-
րելի է ըռել, իր մատիտին տակ, մերթ զուարթ,
մերթ հրէշաւոր, մերթ օտարանայն, մերթ գո-
րովայր, մերթ սուկալի : Արդէն հոչակատր
էր ՅՅ տարուան հասակին մէջ. այն ստեն ամեն
բանէն վեր իր տաղանդին մէջ տիրած գրողն
յատակ զուարթութիւն մ'էր, ծաղորտից շա-
փագանցութեան հրակաթութիւն մը, որ սա-
կայն բնու հանձնարարանութեան և նորութեան
սահմաններէն անդին չէր անցներ : Ռապըլէի
Գործոց և Պապագափ Դարարարք վիլպագ պատ-
կերագրութիւնքն կրնան զուարթացրնել ևս
և արհեստանոտ մը : Պատկերագրութիւնքն
Ռէնըրոնի և Գոլըրժի քանի մը բանաստեղծու-
թեանց, — իրեն աւելի արժանաւոր գովեստից
գործերէն են՝ քերթուիւնքն Աւասակի ծեր
արուեստոյն, դատապարտելոյ իրբէ զթափա-
ռական Հրեայն՝ մշտնջենաւոր շարժման, —
վերջեր գինքը այնչափ սիրցողին յԱնգղիա՝
որչափ 'ի Գաղղիա : Եւ նոյնպէս նաև յուսպիտ
շատ սիրելի եղաւ, գործանայի երևակայու-
թեանր՝ որով պատկերագրութեանց անոր մեծ
բանաստեղծքը, զՏանդէ և զԱրիտոցոյ : Քանի
մը տարիէ 'ի վեր իրեն գործոց հաստատուն
արտաբանանդէս մը կայ 'ի Լոնտրա, որու ինքն
երբնն երբնն մեծամեծ պատկերներ կը զըր-
կէր՝ նկարեալ քիչ սմանց մէջ, արտաքոյ կար-
գի դիւրութեամբ, առանց զանց ընելու բազ-
մաթիւ ծրագրաց յանձնարարութիւնքը, զորս
ինքն 'ի ընդունիլ Բարիտի Հայեղէն 'ի գան-
զան անգղիացի տարաբապետաց : Այս մեծ
պատկերներէն մին, որ Հիւստոնտրիսն ան-
կուր կը ներկայացրնէ, իր զուխ գործոցն հա-
մարուած է. այլ ինքն այնչափ մեծագործ էր իր
յօրինուածոց մէջ, որ իրեն փորք ծրագիրներէն
շատիրը, բովանդակեալ ութնաւոր իջի մը մէջ,
յորս փտեր խոնել այնքան անձինք, այնքան
շարժումն և այնքան կենդանութիւն, շատ ան-
գամ իրականակէս իրեն շճ մեղրի պատկեր-
ներէն աւելի մեծ էին :

Իրբ արձանագործ ստացած համբաւովն՝ ի-
րեն տրուեցաւ Ալեքսանդր Տիւմա իր արձանին
յանձնարարութիւնն, զոր արդէն ինքն ընցու-
ցեր էր և ամենուն շատ յարգի գարծ կ'երևէր :

ՊԵՐՍ Ա.

Քիչ ատենէն արձանն պիտի ընծայուէր հաս-
րակաց. միայն հանդիսին օրը սահմանելը մնա-
ցած էր, երբ Տոտէ կեղծամակնական (diphtherie)
փողացաւութիւն բռնուեցաւ, որ երեք օրուան
մէջ զինքը սպաննեց : Ինքն երևակայեր էր ըզ-
Տիւմա նստած և ծիծաղաղէմ, և խարսխին
համար կաղապարեր էր երկու նորահայր խո-
րաբանակներ. մէկ կողմէն արունց և կանանց
խումբ մը, Մ'անդրիտոտոյի հեղինակին աւելի
քաշուծանեթ վիպասանութիւնքը կարգալու
դրիւ մէջ, և աստիկ մարդ մը, անգորացէտ մը,
որ հիողացմ ուշ կը դնէ պատմութեանց վիպա-
սանին, միւս կողմէն հրացանակիլ մը սուրը
ձեռքը նստած, զոգոցես հօկող պահապան անոր
փաւազ՝ որ իրեն անուան և նշանագրեստին
այնպիսի հոչակ պատճառեց :

Ինքն կը զբաղէր նաև Դեքաբրի ողբերգու-
թեանց պատկերագրութեան, զոր իրեն յան-
ձներ էր Լոնտրայի տպարար մը, թէպէտ և
Անգղիա կը պատկէ տր Սիր Ճոն Հիւպերդէն
պատկերագրեալ մեծ ողբերգակին գործոց
տպագրութեամբ մը :

Ոչպէ միջակ գիտութեամբ մարդ մը որ սեփած
չըլլայ 'ի Կիւստով Տոտէի պատկերագրողեալ
գիրք մը և զարմուցած չըլլայ այն անխոնջ հե-
ղինակին անհասնում երևակայութեան վրայ,
որ չիներ է հազարաւոր դիւթական պալատներ,
սաւառական դղեսկներ, լցեալ արհաւիրք ան-
տառներ, խոր անդունդներ, զատապարտեալ
ողուով ամբոխածողով զժոխական պարտեանկ
ներ, ճիւղեր և խառնագազաններ :

Կիւստով Տոտէի արուեստանոցն հաւատա-
րիմ հայելի մ'էր արուեստաւորին երևակայու-
թեան, որ հոն կեանքը կ'անցընէր. մար եկե-
ղեցոյ մը պատուհանաց պէս մեծ պատուհան-
ներով լուսաւորեալ հին կրկն մ'էր : Պատերէն
մէկուն վրայ դրուած էր անգղիւ նկար մը և
նկարին դիմաց շարժական տախտակամած մը,
որու ծայրն Տոտէ, իրբէ քալ մարտուոցոյ մը,
կը վերեակէր երկու տրպպիզներու միջոցով.
հոս և հոն պատկերակալաց վրայ ուրիշ սկսած
նկարներ, խոր արձանաց և զարդոց ծրագիր-
ներ, վասն զի Տոտէ ժամանակ անցընելու հա-
մար կը զբաղէր նաև զարդական ճարտարապե-
տութեան : Տախտակորմ մը կրկիսին մէկ մասը
կը բաժնէր 'ի միւսայն, որ կը ծառայէր արձանի
ուսումնոցի : Կային հոն գաճէ կապապարն իրեն
այլ և այլ անդրեալ և խմբարձանաց, ժամա-
ցուցից, ստեղծուոր արտանայնաց և հոչակա-
ւոր անթիկ զարդարեալ խորաքանդակք, որոնք
կը ներկայացընէին Բարսիսի դիւցազնընդարիւնը,
զոր մեծաւ զարմանալեօք նկատեցին 1867ին
Աշխարհահանդիսին մէջ : Կայն սեղանի վրայ
երկու մեծ սրահ կային, յորոց միոյն մէջ Տոտէ
կը փորագրէր : Միւսայն մէջ շրաներ կը նկարէր
երբ կամքը կը շարժէր, և ուր ինքն ամեն շա-

բաժի կը հրատարէր իր մտերիմ բարեկամը, յորս կը յիշուին Տիւմա, Ալուս, Կողիէ, Սէն Ստէն, Գրեն, Վակներ, Լից: Այլ թէպէտ բարեկամ էր Վալենտրի, սակայն իր երաժշտական կուռքն էր անուանին Ռոտինի, և կը սքանչանար բոլոր խաղաղական երգացարգարներուն վրայ:

Ամենաբիշ կը խօսէր, և իր բարեկամներն իրեն Կիւտամով Լուսկայն մակնուներ կու տային: Միհաճատակ էր և արտաքստապէս չունէր այն նորածն հանքամանքները, յորոց սովոր է աւս միկն արուեստագէտները ճանչնալ, թերևս զի ուսմիկ արուեստագիտաց Հաճոյ է այսպիսի արև տալին երևոյթներով նորածն երեկի:

Ինչպէս յանդատութեան այսպէս նաև ծխելուն մէջ անպարտական էր. թերևս միայն սիկարը էին իրեն շուսյութեան ծախքն: Որովհետև ընդհանրապէս իրբև ազակ մեղադրուած էր, այլ երբ առիթն կու գար նաև ծախք ընելու մէջ մեծ ըլլալու, հազարաւոր Քրանգաց չէր խնայեր. ուզելով ըսել անոնցմէ միայն մէկը, երբ Լեզդոնիին պատուոյ տակտե եղաւ, իրեն բարեկամաց սեղան մը և հանդէս մը տուաւ, որ երկու օր և երեք գիշեր տևեց, իրեն Ուզի Պաշարի ուսումնոցին մէջ, որուն պատերը իրեն նկարած պատկերներով ծածկեր էր:

ԻՇԽԱՆԻ ՕՌԻԼԷԱՆՈՒ ԱԶԳԱՏՈՂՄԻՆ

Ի Փրանկիս թագաւորոց տոհմից սերունդըը յաջորդ դրկելու կամ գինուորութենէն հանելու (և այս վերջինս կատարուեցաւ) օրինաց առաւարկութիւնն 'ի լոյս հանեց վաղ ընդ փոյթ գիշխանս' որ այն օրինաց ասկ կ'իկնկնէին, յորս առաջինքն՝ Օւլէանու ազգատոհմին անդամը: Ասոնց վրայ շատ խօսուեցաւ, և ախտոջ վիճակաւ թեանց մեջ միանգամայն ժողովրդակամք եղան նաև արտաքոյ Փրանկիոյ: Կը հրատարակենք իրենց քանի մը կենսագրական ծրագիրները:

Նաթ առաջին, յերեան կու գայ ԿՈՍՏՆՈՒՆ, ԲԱՐՏՈՒՆ, ԼՈՒԴՈՒՆԻՍ ՓՈՒԼԵՊՈՍ ԱԼԵԵՐԿ ՕՌԻԼԷԱՆՈՒ, ծննալ 'ի Բարիդ' 'ի 24 օգոստոսի 1838ին, յարքազարմ իշխանէն Փերդինանդոսէ: Վարդապայն գուշակութիւնք իր սրբանը ժողկուզորդեցին, և սակայն սակաք յիշխանաց իրեն նման կրեցին 'ի ձախոց բաղդէ: Տասնամեայ էր երբ 1848ին խռովութեան միջոցին այս Լուսուիկ Փիլիպպոս թագաւորի եղբորորդին հարածուեցաւ այն քաղաքէն որու անունը կը կրէր: Հելլենէ մօրն Հետ, որ Մէքլենպուրկ Եուէրիշնի Փեդրեպոլս Լուզակի իշխանին դուստրն էր արտաքոյ հայրենեաց ապաւէն վնասուեց: — Թափառեցաւ 'ի Գերմանիոյ Մլենզիլիս, յԱնգլիոյ Մարկելու, և յետոյ 'ի Սպանիս, և ապա յԱլեքիս: Չարարատութեանց խիտոզ պարոյն արդագայտ հասունացուց իր ոգին. իր զիմաց վրայ կը տեսնուէր անոյշ ծանրութիւն մը, սանձաշարեալ զորութիւն մը, խորին մտախուժիւն մը: Գեռ չափահաս չէր երբ մարտ մեռաւ, և այն ատեն իրեն յանձնած ձիւ դրուեցաւ Երմուրի կոման: Երբ ապստամբութեան պատերազմն ծագեցաւ 'ի Միացեալ Նահանգս, զուք Տը Եարդըր եզբօրն Հետ նաև արկեց յամբիլիան ծովափունս. և երկուքն ալ իբրև ինքնակամ գինուորք դաշնաւորական

գնդից մէջ մտան, Մագ-Գլէլանի զօրավարին սպասաւորաց մտերիմք:

Դառնալով Մերուպա 1862ին, տուա ինքզինքը գրագիրական այլատութեանց և պատմական և տնտեսական ուսմանց, յորոց հատուածք երեցան 'ի Revue des Deux Mondes օրագրին Սաիաք քան գինքն լաւագոյն կը ճանչնան ընկերական խնդիրը և զորժաւորաց խնդիրը. ինքն սովոր է Հօն, այն այլատութեան մեծամեծ վառարանաց մէջ, այն զօրժաւորաց մեծամեծ հայրենեաց մէջ որք են Ամերիկա և Սնգղիա: Երկնք իր երկու գլխաւոր գործերը. Գործաւորական ընկերակցութիւնք յԱնգլիա, և Չիլիճակէ գործաւորաց յԱնգլիա: Քանի մը տարիէ 'ի վեր կը զբաղի իր Պատմութիւն քաղաքական մարտին յԱմերիկա գործոցն, որու վեցերորդ հատորն ինչուս վրայ է: — Ի 1864ին Կոման Բարիզու ամուսնացաւ Մոնթանսիէի դքսին դստեր՝ Մարիամ Գաւպէլլա իշխանուհոյն հետ. այս ամուսնութեանս ծնան երկու դստերք և երկու ուստերք:

Այլ երևեալագոյն, այն որ Օւլէաններուն մէջ առաջին տեղին կը բռնէ, անտարակոյ ՕՏՐԱՆ ԴՈՒՅՈՒՆ է, որ իր վաթսմանական հասակովն հանդերձ, թեթևամարմ, հուժկու, յանկուցիշ խօսող, անյաղթելի որսորդ է: Իր գինուորական ծառայութիւնք, իր ախոյժ գործօնեութիւնք՝ զոր իր երկրին գրաղիտական և արուեստագիտական շարժման մէջ ջըջուց, իր գաղղիական շինարարներն անգամ ըլլալու պատին, վերջուպէս իր հարստութիւնն և իր մեծարուք Եսնիդիլի դղեակն՝ ուր հաւաքեց զիւրական թիւնգարանի մը մէջ ազգատոհմին յիշատակըը, յառաջ եկեալք 'ի Գանտէէ, զինքը անգուգական դիրքի մը մէջ կը գնեն: Ոչ զքան զնս ընտիր սասար է. մատենագիր է, արուեստագիտ է: